ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔ

✉ գ. ☎-077007066
- saralanj.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » փետրվարի 2020 թվականի թիվ 04 -Ա

ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության Սարալանջ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Սարալանջ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2.Հաստատել 2019 թվականի Սարալանջ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
3.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Արթուր Ալեքսանյան			
Գառնիկ Ալեքսանյան			
Վարդան Հարությունյան			
Արման Հարությունյան			
Նունե Բիծյան			

Համայնքի ղեկավար՝ / / Ա.Սարոյան

ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Լոռու մարզի Սարալանջ համայնքի համայնքապետարանի 2019 թվականի կատարած աշխատանքների մասին.

Կատարված աշխատանքները ներկայացվում են ըստ պարտադիր և պատվիրված լիազորությունների, և ըստ գործունեության ոլորտների՝

Բյուջեի կատարումը եկամուտների և ծախսերի գծով

1.եկամուտներ

Եկամուտների տեսակը	2019թ. նախատեսված	կատարված	կատ. %
հողի հարկ	1050.0	1011,5	96.3%
գույքահարկ՝ փոխադրամիջոցներից	289.5	475,6	164,3%
գոյքահարկ՝ համայնքի տարածքում գտնվող շենք.շինությունների համար	44.7	44.7	100%
համայնքի սեփ. հանդիսացող հող. վարձ. և Գույքի վարձակալությունից եկամուտներ	666,0	541,8	81,4%
պաշտոնական դրամաշնորհներ	3500	3500	100.0%

2.Ծախսեր

2019 թվականին վճարվել է համայնքապետարանի աշխատակիցների աշխատավարձերը և սոց. վճարները՝ ուստի պարտքեր չեն կուտակվել:

.2019 թվականին համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված էր համայնքի գիշերային լուսավորության անցկացում որը հաջողությամբ կատարվել է, համայնքի ֆոնդային բյուջեի ֆինանսավորմամբ 847,780 հազար դրամ գումարով:

2019թ. սեպտեմբեր հոկտեմբեր ամիսներին համայնքապետարանի միջոցներով իրականացվել է համայնքային, միջհամայքային ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ:

2019 թվականին Սաբալանջի համայնքի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվել է՝

կարտոֆիլ	- 2400 ց.
բանջարեղեն	- 220 ց.
խոտ	- 4700 ց.
հացահատիկ	- 2250 ց.
ծղոտ	- 2000ց.

Նշված ապրանքների բերտվությունը գտնվում է միջին մակարդակի վրա:

Ցանվել է 62 հա. աշնանացան և կատարվել է 35 հա. ցրտահերկ: Ինչպես նախորդ տարիներին այնպես էլ 2019 թվականին նկատվեց անասնապահության առաջընթաց, ավելացել է խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, հավերի քանակը, ինչպե նաև մեղվաընտանիքների քանակը,որը նույնպես ավելացել է:
Համայնքում պարբերաբար կատարվում է անասունների պատվաստման միջոցառումներ, որի շնորհիվ 2019թվականին վարակիչ հիվանդություններով վարակված անասուններ չեն եղել:
Համայնքը գազաֆիկացված է, ճանապարհները գտնվում են լավ վիճակում:
Համայնքը չունի ջրի խնդիր, մոտ 5կմ-ից ջուրը հասնում է համայնք:

Համայնքապետարանը և համայնքի հիմնական դպրոցը սերտ-համագործակցության մեջ են՝ կազմակերպում են միջոցառումներ՝ կապված տոնակատարությունների հետ:

Համայնքը ունի փառատոյի բաժանմունք:

Համայնքի բնակիչները օգտվում են <<Vivacell-MTS>> - ի ծառայություններից:
Սաբալանջի համայնքապետարանը 2019թվականին սերտ համագործակցել է տարածքային սոցիալական ծառայության, զազսի բաժանմունքի, անձնագրային

բաժանմունքի, ոստիկանության, զինկոմիսարիայի և այլ պետական և ոչ պետական ծառայությունների հետ:

Համայնքում զինազկոչից խուսափողներ չեն եղել:

Համայնքապետարանի աշխատակիցները 2019 թվականին աշխատել են անթերի: Բոլոր հաշվետվությունները ներկայացվել են ժամանակին և ճիշտ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Սարոյան

t

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարալանջ համայնք, հասցե գՍարալանջ,
հեռ.077007066էլ. փոստ՝ saralanj.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«24>> փետրվարի 2020 թվական 05 -Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<< Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին համայնքի ավագանու 2017թվականի հունիսի 07-ի << Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարալանջ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծման ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 08-Ա որոշմանը համապատասխան , հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման , հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Սարալանջ համայնքի ավագանին որոշում է՝

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումը և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն ՝ համաձայն հավելվածի
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Արթուր Ալեքսանյան			
Գառնիկ Ալեքսանյան			
Վարդան Հարությունյան			
Արման Հարությունյան			
Նուներ Բիձյան			

Համայնքի ղեկավար / Ա.Սարոյան

Հավելված՝
ՀՀ Լոռու մարզի Սարալանջ համայնքի ավագանու
2020թվականի փետրվարի 24-ի N 05-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐ

1.Զաքարյան Դավիթ Ռազմիկի 50.000 դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 50.000դրամ